ՏՆԱՅԻՆ ԿԱԼԱՆՔԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարազդատ Սուքիասյան
ՀՈՀ քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի ասպիրանտ

Քրեական դատավարության խնդիրների իրականացումը երբեմն անհրաժեշտ է լինում սահմանափակել դատավարության սուբյեկտների իրավունքները[1]: Անհատական ազատության քրեադատավարական ցանկացած սահմանափակում ենթադրում է, որ այն պարունակում է պաշտպանության ենթակա հասարակական արժեքների բախման հավանականություն:

Քրեական դատավարության նոր օրենսգքրի նախագծի[2] ստեղծումը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև խափանման միջոցների կիրառումը կարգավորող քրեադատավարական դրույթների՝ միջազգային չափորոշիչներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

Նախագծի հիմնական բնութագրական գծերից մեկը խափանման միջոցների շրջանակի ընդլայնումն է: Նոր խափանման միջոցների (ոստիկանությունում հաշվառվելը, տնային կալանքը և այլն) սահմանումը, ինչպես նաև գրավը որպես ինքնուրույն խափանման միջոց նախատեսելը պետք է նպաստեն իրավակիրառ պրակտիկայում անհիմն կամ հարկադրված կալանավորումների թվի կրճատմանը[3]:

Հայաստանի Հանրապետությունում քրեական և քրեադատավարական օրենսդրությունները չեն նախատեսում տնային կալանք, սակայն այն՝ որպես այլընտրանքային խափանման միջոց, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում և արդեն գործող «Պրոբացիայի մասին» ՀՀ օրենքում ընդգրկվել է:

Նախագծի 123-րդ հոդվածի առաջին մասը տալիս է տնային կալանքի օրենդրական սահմանումը. «Տնային կալանքը մեղադրյալի ազատության այնպիսի սահմանափակում է, որի ընթացքում նա պարտավոր է չլքել դատարանի որոշման մեջ նշված բնակության տարածքը»: Այսինքն՝ տնային կալանքի կիրառման նպատակն է մեղադրյալի պատշաճ վարքագծի ապահովումը՝ նրան թողնելով մեկուսացման համեմատաբար մեղմ պայմաններում:

Ինչ վերաբերում է նախագծի 123-րդ հոդվածի առաջին մասում նշված՝ բնակության տարածք հասկացությանը, ապա օրենսդրական ձևակերպումից երևում է, որ խոսքը միայն անձին սեփականության իրավունքով պատկանող բնակարանի մասին չէ, այլև որոշակի բնակության տարածքի, որը կսահմանի դատարանը: Վիճահարույց է այն հարցը, թե պետք է, արդյոք, տնային կալանքը կիրառվի այն մեղադրյալների նկատմամբ, ովքեր ունեն Նախագծի 123-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված բնակության վայր: Տվյալ դեպքում բնակարան հասկացությունը քրեադատավարական առումով կիրառելի չէ, քանի որ այն ընդգրկում է նաև մասնավոր տրանսպորտային միջոցը, ինչպես նաև արվեստանոցը ևծառայողական աշխատասենյակը, որը առավելապես վերաբերում է բնակարանի անձեռնմխելիությանը, այլ ոչ տնային կալանքին:

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Ընդհանուր մաս. - Եր.: Երևանի համալս. հրատ., 2000, էջ 342:
[2] Այսուհետ նաև Նախագիծ
[3] Տե՛ս https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/Mar9-6_1.pdf

Համաձայն «Պրոբացիայի մասին» ՀՀօրենքի 12-րդ հոդվածի 3-րդ մասի՝ այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին իրավասու մարմնի որոշումն ստանալուց հետո պրոբացիայի ծառայողն անհապաղ, բայց ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում, պարզում է պրոբացիայի շահառուի գտնվելու վայրը, նրա հետ կապ է հաստատում, նրան պատշաճ ծանուցում է տարածքային մարմին ներկայանալու վերաբերյալ, իսկ տնային կալանք այլընտրանքային խափանման միջոցի դեպքում այցելում է պրոբացիայի շահառուի **բնակության վայր**, կազմում նրա անձնական գործ, վերահսկողության պլան, լրացնում հաշվառման քարտ: Վերահսկողության սկիզբը հաշվվում է պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելու պահից:

Սակայն, պրոբացիայի մասին օրենքը նույնպես չի պարզաբանում բնակության վայրի հասկացությունը, ինչպես որ Նախագիծը չի տալիս բնակության տարածք հասկացության սահմանումը:

Այս հարցի կապակցությամբ իրավագետների շրջանում ձևավորվել է երկու մոտեցում: Լայն մոտեցման կողմակիցները գտնում են, որ տնային կալանքի վայրը պետք է սահմանվի ցանկացած տարածք, որտեղ անձը բնակվում է խափանման միջոց ընտրելու ժամանակ[1]: Նեղ մոտեցումը հիմնված է վերահսկողության ապահովման հնարավորության վրա, այդ իսկ պատճառով սրա կողմնակիցները դեմ են խափանման միջոցի վայրը սահմանել հանրակացարանները և բնակարանային այլ շինությունները, քանի որ կբարդանա խափանման միջոցի վերահսկողական գործառույթը[2]:

Տնային կալանքի վայրի սահմանման խնդիրը, մեր կարծիքով, կարելի է լուծել երկու եղանակով:

Նախ, պետք է սահմանել այն անձանց շրջանակը, որոնց նկատմամբ տնային կալանքը որպես խափանման միջոց չի կարող կիրառվել: Դրանց թվին կարելի է դասել Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունեցող ՀՀ քաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց:

Երկրորդ, մնացած բոլոր անձանց համար տնային կալանքի վայր սահմանել այն բնակարանը, որտեղ անձը փաստացի բնակվում է իրավական հիմքերի առկայությամբ՝ առանց օբյեկտիվ խոչընդոտների: Օրինակ՝ վարձակալության պայմանագրով բնակարանը տիրապետելը միայն բավարար չէ, որ վարձակալ հանդիսացող մեղադրյալի նկատմամբ կիրառվի տնային կալանքը, խափանման միջոցի կիրառման վայր սահմանելու համար անհրաժեշտ է ստանալ վարձատուի գրավոր համաձայնությունը:

Համաձայն նախագծի 123-րդ հոդվածի 2-րդ մասի `դատարանի որոշմամբ մեղադրյալին կարող է արգելվել նաև՝

1) ունենալ հեռախոսային հաղորդակցություն, ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ, օգտվել կապի այլ միջոցներից.

2) շփվել որոշակի անձանց հետ կամ իր բնակության վայրում հյուրընկալել այլ անձանց:

Այս սահմանափակումները կարիք ունեն հստակեցման, քանի որ դրանց բացարձակ բնույթը կարող է էականորեն խախտել մեղադրյալի հիմնարար իրավունքները: Մասնավորապես այս սահմանափակումները պետք է պարունակեն որոշակի

---

[1] Տե՛ս *Цоколова О.И.* Домашний арест: сущность и проблемы применения // Правовое и криминалистическое обеспечение управления органами расследования преступлений. М.: Академия управления МВД России, 2011, էջ 418–426.

[2] Տե՛ս *Муртазин Р.М.* Дискуссионные вопросы применения домашнего ареста // Вестник ОГУ. 2012, № 3, էջ 129–132.

բացառություններ՝ պայմանավորված մեղադրյալի կողմից հեռախոսային կապի միջոցից օգտվելու անհրաժեշտությամբ (օրինակ՝ վարույթն իրականացնող մարմնի հետ կապ հաստատել կամ շտապ օգնություն կանչել):

Կարևոր նշանակություն ունի այն անձանց շրջանակի սահմանումը, որոնց նկատմամբ տնային կալանքը կկիրառվի առաջնահերթորեն: Իրավաբանական գրականության մեջ կա կարծիք, որ այդ անձանց շրջանակ պետք է ներառվեն հղի կամ անչափահաս երեխաներ ունեցող կանայք, ծերերը, անչափահասները: Համաձայնվելով այս կարծիքի հետ՝ հարկ է նշել, որ այդ անձանց շրջանակը կարող է որոշվել նաև ըստ մեղադրյալի կատարած հանցագործության տեսակի:

Համաձայն նախագծի 118-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կալանքը կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ այլընտրանքային խափանման միջոցների կիրառումը անբավարար է մեղադրյալի անօրինական վարքագիծը կանխելու համար: Այսինքն՝ տվյալ դեպքում կալանքը կարող է կիրառվել միայն տնային կալանքի (կամ այլընտրանքային փախանման միջոցների) կիրառման անհնարինության դեպքում, ինչը բազմիցս նշել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում:

Տնային կալանքին նվիրված բազմաթիվ աշխատություններում հիշատակվում են արտասահմանյան երկրների փորձը[1]: Այսպես, Լ.Վ. Գոլովկոն, գնահատելով տնային կալանքի կիրառման արտասահմանյան փորձը, նշում է, որ «տնային կալանք» տերմինը համապատասխանում է անգլո-ամերիկյան քրեական իրավունքի հայտնի ինստիտուտի՝ house arrest-ին: Ընդ որում, Ռուսաստանի Դաշնության օրենսդիրը վերցրել է տնային կալանքի ամենալիբերալ տարբերակը՝ պարետային ժամ (curfew)[2]:

Ամերիկայի Միացյալ Նահանգներում տնային կալանքը կիրառվում է քրեական դատավարության բոլոր փուլերում: Անձը, ով ենթարկվել է տնային կալանքի, պարտավոր է չլքել տան տարածքը՝ բացառությամբ մի քանի դեպքերի: Հենց այդ դեպքերով էլ պայմանավորված է տնային կալանքի ռեժիմի խստությունը: Այն սահմանում է տնային կալանքի երեք ռեժիմ, որոնք դասակարգված են ըստ անձի ազատության սահմանափակման աստիճանի.

ա) անձը պարտավոր է չլքել բնակության վայրը որոշակի ժամանակահատվածում,

բ) անձը կարող է լքել տան տարածքը միայն աշխատանքի կամ դպրոց հաճախելու ժամերին,

գ) անձը կարող է լքել տան տարածքը միայն իրավական և բժշկական համապատասխան հիմքերի առկայության դեպքում (punitive form of house arrest):

Կալանավորվածի նկատմամբ հսկողությունը իրականացվում է էլեկտրոնային սարքերի միջոցով կամ տնայց կատարելով: Նրանք կրում են հատուկ թևնոցներ, որոնք ազդանշան են ուղարկում իրավասու համապատասխան մարմնին, եթե կալանավորված անձը հեռանում է իր բնակության վայրից:

---

[1] Տե՛ս *Григорьева А.Е.* Вопросы теории и практики избрания следователями органов внутренних дел отдельных мер пресечения: залога и домашнего ареста: Автореф. дис. … канд. юрид. наук. Красноярск, 2008. էջ 15-16, *Жиляев Р.М., Первозванский В.Б., Медведева И.Н.* О некоторых проблемах избрания судами меры пресечения в виде домашнего ареста и путях их решения //Российская юстиция. 2013. № 11. էջ 52, *Климов В.В.* Законность и обоснованность применения домашнего ареста в уголовном судопроизводстве России: Автореф. дис. … канд. юрид. наук. М., 2011. էջ 13-14, *Макарова С.А.* Мера пресечения в виде домашнего ареста: проблемы теории и практики применения //Вестник Поволжской академии государственной службы. 2013. № 6. էջ 51 և այլն:

[2] Տե՛ս *Головко Л.В.* Альтернатива лишению свободы – очередная химера? //СПС «Консультант Плюс».

ԱՄՆ-ում լայն կիրառում է ստացել նաև ձայնային նույնականացման համակարգի կիրառումը: Դրա նշանակությունն այն է, որ անձի բնակարանում որոշակի ժամի հեռախոսազանգ է հնչում, որին նա պարտավոր է պատասխանել՝ հնչեցնելով գաղտնաբառը, որի միջոցով համակարգիչը նույնականացնում է անձի ձայնը[1]:

Ամերիկյան իրավաբանական տերմինաբանությամբ տնային կալանք հասկացությունը նույնականանում է նաև էլեկտրոնային հսկողության (electronic monitoring) հետ, որն իրականացվում է GPS սարքի միջոցով:

Տնային կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է նաև մի շարք եվրոպական երկրներում, մասնավորապես՝ Գերմանիայում, Իտալիայում, Պորտուգալիայում[2]:

Գերմանիայում տնային կալանքը կիրառվում է 2010 թվականից[3], սակայն վարչատարածքային մակարդակով փորձարկվել է ավելի վաղ Հեսսենում: Տնային կալանքը որպես պատժի տեսակ և որպես խափանման միջոց օրենսդրական մակարդակով ամրագրելիս գերմանացի իրավագետները բարձրացնում էին տնային կալանքի էլեկտրոնային վերահսկման սահմանադրականության հարցը: Մասնավորապես նշում էին, որ էլեկտրոնային սարքերով պետական մարմնի կողմից մեղադրյալի բնակարանում վերահսկողություն իրականացնելը խախտում է նրա բնակարանի անձեռնմխելիության իրավունքը, ուստի անձը պետք է տա իր գրավոր համաձայնությունը, որպեսզի տվյալ իրավունքը չխախտվի[4]:

Պորտուգալիայի քրեական դատավարության օրենսգրքի 213-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը ex officio որոշում է տնային կալանք ընտրելու նախնական պայմանները, ընդ որում տնային կալանքը կամ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրվում է այն դեպքում, երբ խափանման մյուս միջոցները քրեական գործի վարույթի ընթացքում չեն կարող ապահովել անձի պատշաճ վարքագիծ:

Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը կարգադրում է մեղադրյալին չհեռանալ բնակարանից կամ այլ մասնավոր բնակելի վայրից (arresto domiciliario): Անհրաժեշտության դեպքում դատավորը կարող է սահմանափակել մեղադրյալի շփումը համատեղ չբնակվող անձանց հետ:

Ըստ Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի՝ եթե մեղադրյալը չի կարողանում ապահովել իր կարիքները (ունի ինքնասպասարկման խնդիրներ) կամ բացարձակապես չքավոր է, դատարանը կարող է թույլատրել նրան որոշակի ժամկետով[5] բացակայել բնակարանի տարածքից իր կարիքները հոգալու կամ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար: Հարկ է նկատել, որ այս դրույթն առկա է միայն Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքում, որը բավական կարևոր երաշխիք է այն առումով, որ որոշ չափով նվազեցնում է մինչդատական կալանքի բացասական հետևանքները՝ մեղադրյալի աշխատանքը կորց-

---

[1] Տե՛ս House arrest Handbook by Community Corrections Centers Bucks Country Department of Corrections. Pennsylvania, 2003. URL:http://www.buckscounty.org/docs/governmentdocuments/housearresthandbook2013.pdf?sfvrsn=2.

[2] Տե՛ս *Haferkamp*, R.: Elektronisch überwachter Hausarrest - Europa und die Schweiz. Neue Kriminalpolitik 1999, էջ. 4-6; Mayer, M., Haverkamp, R., Levy, R. (eds.): Will Electronic Monitoring Have a Future in Europe? Freiburg 2003

[3] http://www.ris.bka.gv.at/Dokumente/BgblAuth/BGBLA_2010_II_279/BGBLA_2010_II_279.html

[4] Տե՛ս http://www.fhguestrow.de/doks/forschung/kd/kd4/Elektronisch%20%C3%BCberwachter%20Hausarrest.pdf

[5] De Tommaso v. Italy գործով ՄԻԵԴ-ը նշել է, որ Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածը չի նշում, թե մեղադրյալը քանի ժամով կարող է բացակայել բնակարանից «անհետաձգելի զբաղվածության» (indispensabili esigenze di vita) խնդիրները կարգավորելու համար:

նելու և կալանավորված անձի ընտանիքի տնտեսական դժվարությունները հաղթահարելու առումով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Բուզաջին ընդդեմ Մոլդովայի գործով նշել է, որ տնային կալանքը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 5-րդ հոդվածի իմաստով համարվում է ազատությունից զրկում[1]:

Մեկ այլ գործով՝ Դե Տոմազոն ընդդեմ Իտալիայի, ՄԻԵԴ-ը հանգել է այն եզրակացության, որ Իտալիայի քրեական դատավարության օրենսգրքի 284-րդ հոդվածով կիրառված տնային կալանքը խախտել է դիմումատուի ազատ տեղաշարժման իրավունքը:

Տնային կալանքի վերաբերյալ ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների համեմատական ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ տնային կալանքի սխալ կիրառումը հանգեցնում է ազատության և անձնական անձեռնմխելիությանը, ինչպես նաև տեղաշարժի ազատության իրավունքների խախտման: Պարզելու համար, թե անձի որ իրավունքն է խախտվել պետության կողմից Գուցարդին ընդդեմ Իտալիայի[2] գործով, ՄԻԵԴ-ը առաջարկել է ի գիտություն ընդունել մի շարք չափանիշներ, մասնավորապես՝ խափանման միջոցի տևողությունը, դրա կիրառման հետևանքները կիրականացման կարգը:

Տնային կալանքը որպես խափանման միջոց նախատեսված է նաև հետխորհրդային պետություններում, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում, Ղազախստանում, Մոլդովայում և Ուկրաինայում:

Տնային կալանքը որպես խափանման միջոց Ռուսաստանում առաջին անգամ նախատեսվել է Ռուսական կայսրության 1832 թվականի օրենքների ժողովածուում[3]: Ներկայումս ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածը կարգավորում է տնային կալանքի կիրառման հիմքերը, տնային կալանքի հատկանիշները և իրականացման կարգը: ՌԴ քրեական դատավարության օրենսգիրքը չի սահմանում տնային կալանքի նորմը, այլ միայն նշում է դրա տարբերակիչ հատկությունները:

ՌԴ քրեական դատավարության օրենսգրքի 107-րդ հոդվածով տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրվում է կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ դատարանի որոշման հիման վրա խափանման մյուս միջոցների կիրառման անհնարինության դեպքում: Տնային կալանքը կասկածյալի կամ մեղադրյալի՝ հասարակությունից մեկուսացման պայմաններում բնակելի շենքում գտնվելն է, որտեղ նա բնակվում է սեփականատիրոջ, վարձակալի կամ այլ օրինական հիմքերով տիրապետողի կարգավիճակով:

ՌԴ-ում տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը կասկածյալին կամ մեղադրյալին կարող է արգելել՝

1) լքել բնակելի շենքի տարածքը որոշակի ժամանակով,

2) գտնվել որոշակի վայրում, ինչպես նաև այցելել միջոցառումների,

3) շփում ունենալ որոշակի անձանց հետ,

4) ուղարկել կամ ստանալ նամակագրություն, փոստային, հեռագրական և այլ հաղորդումներ,

5) օգտվել կապի միջոցներից և համացանցից,

---

[1] Տե՛ս Buzadji v. the Republic of Moldova [GC], no. 23755/07, § 104, ECHR 2016:

[2] Guzzardi v. Italy, 6 November 1980, §§ 92-93, Series A no. 39

[3] Տե՛ս **Ахминова Ю. Ю.** Домашний арест как мера пресечения: проблемы избрания и реализации на стадии предварительного расследования: диссертация ... кандидата юридических наук: 2017, էջ 19:

6) վարել ավտոմեքենա կամ այլ տրանսպորտային միջոց, եթե կատարված հանցագործությունը կատարվել է ճանապարհային երթևեկության կանոնների խախտմով:

Այս իրավասահմանափակումները գործում են նաև այն դեպքում, երբ բժշկի ցուցումներով կասկածյալը կամ մեղադրյալը տեղափոխվում է բժշկական հաստատություն: Այդ դեպքում տնային կալանքի վայր է հանդիսանում համապատասխան բժշկական հաստատությունը:

Հարկ է նկատել, որ նախկին խմբագրությամբ (2017 թվականի դեկտեմբերի 20-ի դրությամբ) գործող ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով տնային կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը կասկածյալին կամ մեղադրյալին կարող էր արգելել վերոհիշյալ 1-ին, 3-5-րդ կետերում ամրագրված սահմանափակումները կիրառել:

Թեև մինչև 2018 թվականը ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով տնային կալանքի հետ ուղեկցվող արգելքները չորսն էին, սակայն իրավակիրառ պրակտիկայում հանդիպում էին բազմաթիվ դեպքեր, երբ դատարանները հավելյալ սահմանափակումներ էին կիրառում կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ: Ասվածի վառ ապացույցն է այն, որ 2017 թվականին ՄԻԵԴ-ը Ռուսաստանի Դաշնության դեմ կոմունիկացրել է 12 բողոք[1], որոնք վերաբերում են տնային կալանքի հետ ուղեկցվող սահմանափակումների գերազանցմանը:

Բելառուսի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը թեև նախատեսում է տնային կալանքը որպես խափանման միջոց, սակայն այն աչքի է ընկնում հետադիմական կարգավորումներով: Այսպես, այդ երկրի քրեական դատավարության օրենսգրքի 125-րդ հոդվածի համաձայն՝ տնային կալանքը կասկածյալի կամ մեղադրյալի՝ հասարակությունից մեկուսացումն է՝ դատախազի, նրա տեղակալների, քննչական կոմիտեի նախագահի կամ դատարանի հաստատած իրավասահմանափակումների կիրառմամբ: Այսինքն՝ օրենսգիրքը տնային կալանքի հետ ուղեկցվող սահմանափակումներ ընտրելու լիազորությամբ օժտել է ոչ միայն դատարանին, այլև՝ դատախազին, նրա տեղակալներին և քննչական կոմիտեի նախագահին, ինչը, մեր կարծիքով, անթույլատրելի է, քանի որ հիմնարար իրավունքների սահմանափակումները պետք է կիրառեն բացառապես դատարանները:

Ղազախստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 146-րդ հոդվածի համաձայն՝ տնային կալանքը կասկածյալի, մեղադրյալի մեկուսացումն է հասարակությունից առանց կալանքի տակ պահելու, բայց դատարանի կողմից ընտրվող իրավասահմանափակումների կիրառմամբ: Այն գրեթե նույնական է ՌԴ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավասահմանափակումների հետ: Ի թիվս այլնի՝ նշված է, որ դատարանը կարող է կիրառել այլ միջոցներ, որոնք կապահովեն մեղադրյալի կամ կասկածյալի պատշաճ վարքագիծը և հասարակությունից նրա մեկուսացումը:

Տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալի նկատմամբ վերահսկողությունը այստեղ իրականացվում է տնայցերի միջոցով կամ GPS սարքերի միջոցով: Վարույթն իրականացնող մարմնի աշխատակիցը կարող է օրվա ընթացքում 2 անգամ

[1] Տե՛ս Kovrov v. Russia, application no. 42296/09, Ulyanitskiy v. Russia, application no. 71805/11, Botnaryuk v. Russia, application no. 75089/13, Lepeshkina v. Russia, application no. 50956/15; Shirokozhukhov v. Russia, application no. 50995/15, Pogrebov v. Russia, application no. 50999/15, Korotkova v. Russia, application no. 51016/15, Isaichev v. Russia, application no. 1327/16, Nikolenko v. Russia, application no. 14206/16, Mukhin v. Russia, application no. 24655/16, Trishina v. Russia, application no. 46130/16, Tskhomelidze v. Russia, application no. 8889/17.
https://hudoc.echr.coe.int/eng#{%22fulltext%22:[%2242296/09%22],%22itemid%22:[%22001-177785%22]}

այց կատարել մեղադրյալի բնակարան, սակայն կարող է մուտք գործել միայն վերջինիս և համատեղ բնակվող անձանց համաձայնությամբ, ընդ որում՝ 30 րոպեից ոչ ավելի:

Մոլդովայի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում նույնպես խնդրո առարկա սահմանափակումները նույնական են ՌԴ քրեական դատավարության օրենսգրքին: Բացի իրավասահմանափակումներից՝ մեղադրյալը, որի նկատմամբ ընտրվել է տնային կալանքը որպես խափանման միջոց, պարտավոր է պահպանել էլեկտրոնային սարքերի ամբողջականությունը և պատասխանել վարույթն իրականացնող մարմնի հեռախոսազանգերին:

Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի 181-րդ հոդվածի համաձայն՝ տնային կալանքը կասկածյալի, մեղադրյալի կողմից բնակելի տունը որոշակի ժամկետով լքելու արգելքն է: Տնային կալանքի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է ներքին գործերի մարմինը, որի աշխատակիցը լիազորված է անարգել մուտք գործել մեղադրյալի բնակարան՝ հավաստիանալու մեղադրյալի ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման մասին: Հատկանշական է, որ Ուկրաինայում տնային կալանքի տևողությունը մինչդատական վարույթի փուլում չի կարող գերազանցել 6 ամիսը: Եթե մինչդատական վարույթի ընթացքում մեղադրյալը գտնվել է տնային կալանքի ներքո 6 ամիս, ապա խափանման միջոցը մեխանիկորեն վերացվում է:

Այսպիսով, կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ տնային կալանքը որպես խափանման միջոց օրենսդրական ամրագրում է գտել մի շարք երկրներում, սակայն տնային կալանքի տակ գտնվող մեղադրյալի նկատմամբ արդյունավետ վերահսկողություն իրականացնելու մասով ուսումնասիրված գրեթե բոլոր երկրների քրեական դատավարության օրենսգրքերում առկա են բազմաթիվ վիճահարույց խնդիրներ, որոնց լուծման համար անհրաժեշտ է համապատասխան օրենսդրական փոփոխություններ:

ДОМАШНИЙ АРЕСТ КАК МЕРА ПРЕСЕЧЕНИЯ В СОВРЕМЕННОМ УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ

Вараздат Сукиасян
Аспирант кафедры уголовного
и уголовно-процессуального права РАУ

В данной статье рассмотрены проблемы применения такой меры пресечения как домашний арест. Дается оценка эффективности домашнего ареста как меры пресечения, в уголовном процессе. Выделены проблемы применения домашнего ареста, а также раскрывается опыт зарубежных стран по применению меры пресечения в виде домашнего ареста.

HOUSE ARREST AS A PREVENTIVE MEASURE IN THE MODERN CRIMINAL PROCEDURE

Varazdat Sukiasyan
PhD Studen at the RAU Chair
of Criminal Law and Criminal Procedure

This article examines the problems of applying such a preventive measure as a house arrest. An assessment of the effectiveness of home arrest as a measure of restraint in criminal proceedings is given. The problems of home arrest are highlighted, as well as the experience of foreign countries on the application of preventive measures in the form of house arrest is disclosed.

Բանալի բառեր – խափանման միջոցներ, տնային կալանք, կալանավորում, պրոբացիա, մեղադրյալ
Ключевые слова: меры пресечения, домашний арест, заключение под стражу, пробация, обвиняемый
Key words: Preventive measures, house arrest, detention, probation, accused